ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

16 հունվարի 2012 թվականի թիվ 2-Ա

## ԶՈՀՎԱԾ /ՄԱՀԱՑԱԾ/ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ /ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ/ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԹԻ 14-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 72-ր հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիս 9-ի "Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին" թիվ 947-Ն որոշումը՝

կ ա ր գ ա դ ր ու մ  ե մ.

1. Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու և ստուգելու նպատակով ստեղծ հանձնաժողով հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Ֆ.Ափինյան | - | Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Հ.Ավալյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ |
| Մ.Մխիթարյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ |
| Գ.Հարությունյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ |
| Ա.Գևորգյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ |
| Վ.Խառատյան | - | ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առաջատար մասնագետ |

2. Առաջարկել ՀՀ Տավուշի մարզի համայնքների ղեկավարներին՝ ՀՀ կառավարության որոշման սահմանված կարգով համայնքներում ստեղծել համապատասխան հանձնաժողովներ:
3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2006 թվականի փետրվարի 7-ի թիվ 14-Ա կարգադրությունը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

16 հունվարի 2012թ.
ք.Իջևան